⁸ Путин В.В., Новый интеграционный проект для Евразии – будущее, которое рождается сегодня.// [Электронный ресурс]// Известия. 3 октября 2011г// URL: <http://izvestia.ru/news/502761> (дата обращения 12.04.2013)

2. Назарбаев Н. Евразийский Союз: от идеи к истории будущего// [Электронный ресурс]// Известия 25 октября 2011// URL: <http://izvestia.ru/news/504908> (дата обращения 12.04.2013)
3. В. Путин «Россия: новые восточные перспективы»// Независимая газета// 14.11.2000г.
4. Гарегинян А. «Интеграция не всегда гладко, но всегда важно»//[Электронный ресурс]// Голос Армении общественно-политическая газета 06.04.2013, No35/ URL:<http://www.golosarmenii.am/ru/20388/economics/25859/>

ИСТОРИЯ

Некоторые аспекты византийского, армянского, латинского и исламского государственно-правовых систем на рубеже XI – XII вв.

Аветисян В.Г.

Центр Оценки и Тестирования (Армения, Ереван)

E-mail: slavius1@rambler.ru

Ключевые слова: Византийская империя, правовая система, армяне халкидониты, Комнины, тюрки-сельджуки, крестовые походы, Латинский Восток.

Some Aspects of State and Legal Systems Byzantine, Armenian, Latin and Islamic in Abroobs at XI - XII Century

Avetisyan V.G.

Assessment and Testing Center (Armenia, Yerevan)

E-mail: slavius1@rambler.ru

Abstract: The article is sanctified by the international position of the Eastern Mediterranean in the second half of XI century and the beginning of the XII century in the era of the campaigns Turkish and the Crusades. In this context, particular attention is allocated to specific explanation of specific features of the state, legal, hierarchical systems within the newly formed political units, established as a result of the Turkish and the Crusades, their interaction with the Byzantine and Armenian feudal traditions. In conditions of constant complaints from Constantinople to all countries in the region, these problems are of paramount importance.

Key words: Byzantine Empire, legal system, Armenians Chalcedonians, Komnenos, Seljuk- Turks, Crusades, the Latin East.

Բյուզանդական, հայկական, լատինական և մահմեդական պետաիրավական համակարգերի մի շարք ասպեկտներ XI-XII դ.դ. սահմանագծին

Ավետիսյան Վ.Գ.

Գնահատման և Թեստավորման Կենտրոն (Հայաստան, Երևան)

E-mail: slavius1@rambler.ru

Ամփոփում: Հոդվածում քննարկվում է Արևելյան միջերկրածովի երկրներում տիրող միջագային դրությունը XI դ. վերջին XII դ. սկզբին՝ թյուրքական և խաչակրաց արշավանքների դարաշրջանում: Այս համատեքստում առանձնակի ուշադրություն է դարձվել թյուրքական ու խաչակրաց արշավանքների արդյունքում կազմավորված նոր միավորների պետական, իրավական, հիերարխիկ համակարգերի առանձնահատկություններին, բյուզանդական և հայկական ավանդույթների հետ դրանց փոխհարաբերությունների վրա: Կոստանդնուպոլսի կողմից տարածաշրջանի բոլոր երկրների նկատմամբ մշտական հավակնությունների պայմաններում այդ խնդիրներն առաջնահերթ նշանակություն են ստանում:

Վճռորոշ բառեր՝ Բյուզանդական կայսրություն, իրավական համակարգ, քաղքեղոնական հայեր, Կոմնենոսներ, թյուրք-սելջուկներ, խաչակրաց արշավանքներ, Լատին Արևելք:

Начиная со второй половины X века для защиты своих восточных фем, Византийская империя проводила политику переселения армян, активизировавшейся в следствии походов тюркок-сельджуков. На новых местах обитания армянские князья и цари получали разнообразные привиле-

гии, а их положение внутри византийской аристократии больше соответствовало статусу "родственника императора". Возглавлявшие данные территории правители-архонты входили в состав идеальной семьи народов во главе с императором - "василевсом", образовав такую пирамиду

власти, где понятия "друг", "брат", "сын" имели титульное значение, обуславливая занимаемое место конкретного феодала в аппарате управления. Важность приобретал также византийский сан, который даровался правителю пожизненно. Обе системы имели международно-правовой характер и определяли нормы отношений Византии с соседними государствами [20]. Этим подходом Константинополь демонстрировал законность идеи верховного сюзерена императора на границах бывшей Римской империи и христианского мира [3,5]. Даже случаи не признания, каким-то правителем сюзеренитета василевса, рассматривались как временная потеря, а усмирение этих мятежников становилось приоритетной задачей.

В контексте обсуждаемого вопроса особый интерес вызывает политика восстановления византийского права в утраченных территориях. В частности, в населенных преимущественно армянами юго-восточных фемах, правовыми инициаторами для урегулирования общественных отношений традиционно выступали императоры, которые своими новеллами пытались преобразовать наследственные и брачные нормы, приводя их в соответствии с византийскими законами. В Киликии в данный период, главным образом, использовались некоторые памятники римского и византийского права [9].

Что касается расположенных к югу от Киликии регионов Сирии и Палестины, то Алексей I Комнин (1080-1118) в Константинополе заставил лидеров крестоносцев принять клятву о вассальной зависимости и взять обязательство вернуть Византии эти земли в случае их освобождения [1,16]. То есть, в отличие от Киликийской Армении, которая рассматривалась исключительно в качестве неотъемлемой имперской территории, в крестово-латинских образованиях Константинополь был готов смириться лишь с номинальным признанием своего сюзеренитета.

Сложившаяся ситуация резко поменялась в связи с тюрко-сельджукским нашествием. После победы над арабским халифатом сельджуки нанесли серьезный удар Византии при битве Манцикерта в 1071 г. Восточные фемы империи оказались в руках тюркских племен. Эти поражения заметно продвинули границы греческого мира - ойкумена - на запад. О былом влиянии империи свидетельствовали, сохраняющиеся пока в крупных городах Сирии, Киликии и Палестины, греческие общины. Но в качестве греческого населения в это время выступали не только этнические греки, но также и носители православной веры - армянские, ассирийские, частично арабские и грузинские элементы.

Успехи тюркских завоеваний объясняются применяемой против них военной тактикой, суть которой заключалась в искусственном обезлюдении контактных с кочевниками провинций и с усилением там оборонительных сооружений. В условиях быстрого преодоления сельджукской конницей этой "пустыни", имперские гарнизоны оказывались далеко в тылу вражеских сил, становясь легкой добычей. Кроме того, претенденты на византийский трон в своих междоусобных войнах привлекали наемные тюркские отряды, увеличивая, тем самым, их фактор во внутренних делах империи [20].

Несмотря на то, что тюрки являлись мусульманами, их появление лишь усилило раздробление между различными исламскими объединениями, оставшимися после развала арабского халифата, что привело к образованию новых исламских единиц [15,21,23]. Разложение недавнего тюркского единства, делало насущным ускорение процесса замены военного попустительства на вассальную зависимость от султана [10]. Таким образом основные результаты тюрко-сельджукских завоеваний можно свести к следующему:

- Они преобразовали идею джихада - священной для мусульман войны. Если до этого правом на призыв к джихаду обладал исключительно халиф, то теперь эта инициатива переходила к султану и высшим тюркским военачальникам;
- В результате этих набегов территория Ближнего Востока покрылась множеством военизированных объектов, что естественным образом способствовало упадку городов;
- Абсолютно в другое измерение переводилось взаимоотношения христиан и мусульман, обостряя нетерпимость с обеих сторон.

Концентрация армянского населения в Киликии создавала условия для формирования там армянского княжества. Уже после Мацикерта многие армянские феодалы начали проводить независимую политику. Подчеркнем, что обособившаяся в Византии армянская знать, не являлась однородным обществом: большая часть армянской аристократии в восточных фемах империи были халкидонянами, что серьезно влияло на перекройку политической среды [2,4,5]. Из армянских княжеских домов Киликии, только Рубиниды полностью сохраняли армянское вероучение и стремились воссоздать национальное государство [4,6]. Для легитимации своих амбиций они провозглашали себя наследниками армянских королевских династий [13,16,17]. Становление Рубинидского княжества по времени совпало с первым крестовым походом. Последнее обстоятельство поспособствовало двустороннему сближению, но сотрудничество с армя-

нами, думаем, обусловлено следующими аргументами:

а. На кануне крестового движения армяне среди населения Восточного Средиземноморья имели ощутимый вес;

б. Армяне в сравнении с другими местными этносами сохранили политические, социальные, военные структуры, следовательно, были более организованными;

в. Вовлеченные в структуры Византийской армии, армяне более или менее были знакомыми с франкскими, норманнами наемниками-рыцарями [23].

г. Учитывая прежние сложные армяно-византийские отношения, можно было полагаться на армян в борьбе с империей, которые желали еще и сбросить с себя греческое ярмо "раскольников, схизматиков" [14].

Регион подвергся еще большим изменениям после первого крестового похода. Клермонская речь папы Урбана IV (1088-1099) 1095 г. заложила основы для будущих грандиозных перемен. Воззвание к помощи страдающим на Востоке братьям подогревалось фанатиками, а на настроения правящих кругов Европы влияли просящие помощь посланники Константинополя [12,26]. Разумеется, последние всячески подчеркивали необходимость в хорошо вооруженном рыцарском отряде, а не в многочисленном сброде, поэтому негативно воспринимали любые попытки поставить под вопрос главенство Византии в будущих антитуркских походах.

Несмотря на это, весной 1096 г. началось неорганизованное движение 60-70-тысячной бедноты на Восток. Крупные феодалы выступили только вслед за ними осенью того же года [1]. Освобождение Никеи в апреле 1097 г. как бы стало отправной точкой для усиления в рядах крестоносцев антивизантийских настроений, игнорируя клятву верности, данную императору до этого [16,28].

Первый крестовый поход закончился образованием на Востоке четырех латинских или франкских государств - Графство Эдесское, Княжество Антиохии, Графство Триполи, Иерусалимское королевство. С юридической точки все они подчинялись Иерусалимскому королю, но на самом деле вели полузависимую политику.

Особенность первых двух формирований заключалась в том, что в этническом смысле там преобладали армяне и греки: Графство Эдесское порою называли франко-армянским государством, нередко были случаи смешанных браков между франкской, армянской и греческой знатью [18,25]. В Антиохии греческое влияние сохранялось почти весь период существования княжества, о котором свидетельствуют периоди-

чески возникающие вопросы вокруг престола греческого православного патриарха города [22,24]. Все военные кампании византийских императоров преследовали цель восстановления православного патриархата.

В предместьях городов располагались и мусульманские селения, в числе которых были и сунитские, и шиитские, и разного рода исламские группы. Лавируя между конфликтующими сторонами, они каждый раз определенным образом меняли ход событий.

Состав самого европейского населения Востока тоже был крайне неоднородным. Уже с 30-х гг. XII в. Латинский Восток стремительно франконизировался. Причиной такой тенденции служило увеличение роли в управленческой структуре орденов Тамплиеров и Госпитальеров, ряды которых в основном пополнялись выходцами из Франции. Позднее, параллельно с активизацией итальянских купцов, возрастал контингент пизанцев, генуэзцев, венецианцев [27].

Необходимость контроля подобной контррастной этнической мозаики, стимулировала оформление некоторых нормативных сводов подобно "Антиохийским ассизам" [7] и "Иерусалимским ассизам" [8]. Но они до конца не регулировали многие спорные вопросы, оставляя нерешенными такие, например, важные моменты как - престолонаследие. После взятия Иерусалима главой новообразованного королевства (Защитником Гроба Господня) по согласию баронов стал Готфрид Бульонский [19,28]. Передача трона, таким способом, впоследствии послужила оспариванию баронами наследственного порядка королевской власти [11].

Самой насущной внутренней проблемой Латинских государств оставалась этническая ситуация. Число франков по сравнению с занимаемой ими территорией было очень ограниченным. Для притока на Восток европейцев постоянно расширялись их привилегии, им даровались целые кварталы, но по закону они не были военнообязанными, и тем самым мало способствовали комплектованию армии [19].

Отсутствие людских ресурсов заменялось, основанной на общем интересе, взаимопомощью. Более наглядно она проявилась в отношениях Иерусалима и Триполи, связанные непосредственным соседством. В случае Антиохийским княжеством и Эдесским графством короли Иерусалима уподоблялись президенту христианской конфедерации: оказанная помощь и несколько примеров регентства в источниках чаще всего именуется "отцовской заботой", чем обязательством сюзерена над подчиненными. Эти три северных барона являлись больше "верными", чем "вассалами". Правители Антиохии и

Эдессы в своих уделах вообще исполняли функции верховной инстанции. Они имели собственные дворы, совет из дворян и духовенства, в Антиохии применялись не "Иерусалимские", а "Антиохийские ассизы", которые, кстати, давали больше прав князю, чем "Иерусалимские ассизы" королю [7]. Тем не менее, королевский титул, моральное превосходство владетеля Иерусалима и помощь, которую он оказывал во всех обстоятельствах трем князьям, позволили образовать меж ними иерархию, во главе которой и встал король [11,19].

Такая система действий довольно эффективно оправдывала себя особенно в первый период существования Иерусалимского королевства (1099-1187 гг.), когда авторитет института короля вынуждал противоборствующие стороны пойти на уступки. Например, в июне 1109 г. в состоявшемся под Триполи суде, король Балдуин I (1100—1118 гг.) сумел помирить враждующих князей Антиохии, Эдессы и Триполи, общими силами окончательно преодолев сопротивление мусульман в Триполи [28]. К сожалению, разногласия между франкскими дворами постепенно только усиливались, что в итоге стало одной из главных причин краха латинских государств.

Таким образом, Восточно-Средиземноморский регион X-XI вв. представлял собой территорию проживания многочисленных народов, разных по языку, религии, происхождению и уровню развития. Аргументы, которые влияли на беспрецедентно быстрое и противоречивое развитие истории. После поражения Византии в 1071 г. от сельджуков восточные провинции империи оказались под игом чужеродных племен. Проживающие в Сирии, Малой Азии и Палестине христиане, оказавшись в безвыходном положении, либо вынужденно покидали родину, либо были обречены принять уклад жизни кочевников, дожидаясь удобного момента освобождения. Такие надежды возбудили восточные крестовые походы европейских рыцарей, но, имеющиеся в рядах крестоносцев разногласия по поводу мироустройства на завоеванных землях, в конце концов изменили мотивы первоначальной миссии крестового движения, склоняя на первый план идею создания независимых латинских государств.

Литература

1. Анна Комнина, Алексиада, под ред., Любарской Я. Н., Москва, 1965, с. 287-289,
2. Арутюнян Г. С., Киликийская Армения-Франция: (параллели между системами центрального управления), "История и Образование", Ереван, 2005, с. 80-81.

3. Арутюнян Г. С., Замечания на вопрос о формирования в Киликии армянского государства, "Вопр. истории", № 6, Ереван, 2005, с. 227.
4. Арутюнова-Фиданян В. А., Армяно-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.), Ереван, 1980, с. 106-152
5. Арутюнова-Фиданян В. А., Армяно-византийская контактная зона (X—XI вв.): Результаты взаимодействия культур, Москва, 1994, с. 21
6. Арутюнова-Фиданян В. А., Армяно-византийская контактная зона, с. 56-92,
7. Ассизы Антиохийские, перев. Паповяна А., "Вестник Матенадарана", Ереван, 1958, № 4, с. 331-352.
8. Ассизы Иерусалимского королевства, Стасюлевич М. М., История Средних веков, кн. 3, Крестовые походы (1096-1291), 3-е изд., Москва, 2001, с. 564-573.
9. Бозоян А. А., Армянские средневековые памятники права, "Эджмиацин", № 8-9, (2006), с. 97, 100-104.
10. Гордлевский В. Л., Государство сельджукидов Малой Азии, Избр. соч., т. 1, Москва, 1960, с. 74-75.
11. Додю Г., История монархических учреждений в Латино-Иерусалимском королевстве (1099 - 1291г.), СПб, 1897, с. 101-112.
12. Заборов М. А., История крестовых походов в документах и материалах, Москва, 1977, с. 47-54.
13. Касуни Е. Г., Киликийское армянское княжество в политической системе Ближнего Востока (1080-1137), Бейрут, 1974, с. 18-20.
14. Киликийская Армения в представлениях сопредельных государственных единиц, под ред. Бозоян А. А., Ереван, 2016, с. 22-24, 31-32.
15. Литвинов Г. М., Туркмены на Ближнем Востоке (XI в.), URL://<http://www.deusvult.ru/113-turkmeny-na-blizhnem-vostoke-xi-v.html>, (01.12.2013),
16. Матфей Эдесский, Хронография, перевод Бартияна Г. М., Ереван, 1991, с. 272-274.
17. Микаелян Г. Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 81-87,
18. Мутафян К. З., Королевы Иерусалима, URL://<http://www.aniv.ru/archive/2/korolevy-ierusalima-klod-mutafjan/>, (25.06.2013),
19. Ришар Жан, Латино-Иерусалимское королевство, СПб, 2002, с. 81-87.
20. Степаненко В. П. Византия в международных отношениях на Ближнем Востоке (1071—1176), Свердловск, 1988, с. 25.
21. Степаненко В. П., указ, соч., с. 27-31.
22. Тер-Петросян Л. Г., Крестоносцы и армяне, т. 2, Ереван, 2007, с. 14-18.
23. Усама ибн Мункиз, Книга назидания, Москва, 1958, с. 217,
24. Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, p. 178,
25. Cheynet Jan-C., Le sceau de Thierry de Barneville, duc d'Antioche, Revue numismatique, 6-e série, t. 26, Paris, 1984, p. 227.
26. Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, t. 2, Lisbonne, 2003, pp. 1036-1041, 1210-1217.

27. Foulcher de Chartres, l'Historia Hierosolymitana, par. Guizot M. F., Paris, 1825, URL://<http://www.templiers.net/foulcher-de-chartres/>, (21.09.2013),
28. Grousset R., L'Empire du Levant: Histoire de la Question d'Orient, Paris, 1949, p. 301-311.

29. Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. 1, Paris, 1844, p. 127-128.

Ֆիդայական պայքարը Կարին աշխարհում XIX դարի վերջին քառորդին

Մարգարյան Ա.Ս.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/
sargsyanarman@bk.ru

Վճռորոշ բառեր՝ հայություն, պայքար, ազատասեր, Կարին, Օսմանյան կայսրություն, հայրուկ, շարժում

The Fidai Fight in Karin Province in Last Quarter of the XIX Century

Sargsyan A.S.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)
sargsyanarman@bk.ru

Abstract: The dissemination of patriotic ideas by Armenian libertarian figures, as well as the fact, that the Armenian people didn't receive anything during the Summit of Berlin in return for the huge sacrifices, made during the Russian-Turkish war (1877-78), caused Armenians to heed the Mkrtych Khrimyan's calls for "iron ladle" and take up arms. Another noteworthy fact is that Ottoman Empire, having lost its European territories during the war and now being an Asian country, feared liberation movements and intensified the economic, political and national repressions. Unarmed and helpless villagers, with no other way out, killed a Kurdish Agha or Turkish Policemen, left their houses and families and head off to mountains. This fight was quite justified; it came as an outburst and was against injustice, it was a struggle for survival, honor and dignity. Armenian self-devoted offsprings consciously engaged in an unequal struggle against the powerful enemy for the sake of their nation and homeland.

During the last quarter of the XIX century Armenians of Karin province, mainly populated by Armenians, near the region Karin and the Russian border, were in a tough situation. That is why the libertarian ideas easily permeated and the wave of fedayi's struggle was spread more rapidly and vigorously than in other parts of Western Armenia. The liberation processes which first appeared in the form of Constitutional Movement subsequently grew into an armed fedayi struggle, and the national liberation struggle entered a practical phase.

The outstanding hayduks were Tigran Okonyan, Sepouh (Baberdtsi) Turbakh, Kaytsak Arakel, Anton Gosh, Hovhannes Korkotian, Vahan Shahinian, Nicole, Melkon, Gerasim, Armen Garo, Gaspari Gisak, Garegin Karnetsi, Michael, Baberdtsi Gevorg, Karnetsi Yeghish, Balajan, Vani Sargis, Aram Aramyan and many others, whose names remained unknown to future generations.

Key words: Armenians, struggle, libertarian, Karin, Ottoman Empire, hayduk, movement.

Фидайнская борьба в провинции Карин в последней четверти XIX века

Саргсян А.С.

Институт истории НАН РА (Армения, Ереван)
sargsyanarman@bk.ru

Резюме: Распространение патриотических идей армянских свободолюбивых деятелей, а также тот факт, что армянский народ, несмотря на огромные жертвоприношения, сделанные во время русско-турецкой войны (1877-78), ничего не заполучил во время Саммита в Берлине, привели к тому, что армяне прислушались к призывам Мкртыча Хримяна по "железному половнику" и взялись за оружие. Еще одним примечательным фактом является то, что Османская империя, потеряв свои европейские территории во время войны и превращаясь в азиатскую страну, опасалась освободительных движений и усилила экономические, политические и национальные репрессии. Невооруженные и беззащитные жители, не видя другого выхода, убили курдского аги или турецкого полицейского, покинули свои дома, своих семей, и направились в горы. Эта борьба была криком души Армян против несправедливости, это была вполне оправданная борьба за выживание, достоинство и чести.

Самоотверженные сыновья народа сознательно вступили в неравную борьбу ради своего народа и родины.

В течение последней четверти XIX века армяне провинции Карин, населенной в основном армянами, вблизи области Карин и российской границы, оказались в сложной ситуации. Именно поэтому свободолюбивые идеи легко проникли и волна борьбы фидаинов распространилась более быстро и интенсивно, чем в других частях Западной Армении. Освободительные процессы, которые впервые начались развиваться в виде конституционного движения, переросли в вооруженную борьбу и национально-освободительная борьба вступила в практическую фазу.

В этой борьбе выделились Тигран Окоян, Сепу (Бабердци), Турбах, Кайцак Аракел, Антон Гош, Оганнес Коркотян, Ваган Шагинян, Никол, Мелкон, Герасим, Армен Гаро, Вардгес, Гисак, Гарегин Каренци, Микаел, Бабердци Геворг, Карнеци Егиш, Баладжан, Вани Саргис, Арам Арамян и многие другие, имена которых остались неизвестны для будущих поколений.

Ключевые слова: армяне, борьба, свободолюбивые, Karin, Османская Империя, гайдук, движение

XIX դարի վերջին քառորդը հայոց պատմության՝ իրադարձություններով հարուստ ժամանակահատվածներից է: Հայ ժողովուրդը, ով 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կրած մեծ զոհողությունների դիմաց Բեռլինի վեհաժողովում ոչինչ չէր ստացել, հիասթափված և ճարահատյալ դիմեց զենքի: Դրան նպաստեցին նաև հայ ազատասեր գործիչների հայրենասիրական գաղափարների տարածումը և, հատկապես, Մկրտիչ Խրիմյանի «երկաթե շերեփի» հայտնի քարոզը: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը, պատերազմի արդյունքում եվրոպական տիրույթների մեծ մասը կորցնելու հետևանքով վերածվելով ասիական տերության և վախենալով ազատագրական շարժումների տարածումից, աննախադեպ կերպով խստացրեց տնտեսական, քաղաքական և ազգային բռնաճնշումները: Անզեն ու անպաշտպան հայ գյուղացին, այլ ելք չտեսնելով, որևէ քուրդ աղա կամ թուրք ոստիկան էր սպանում, թողնում էր տուն, տեղ, ընտանիք և լեռները բարձրանում: Մկսված այդ պայքարը հայության ոգու արդար ճիչն էր ընդդեմ անարդարության և մղվում էր այդ պայքարը հանուն գոյության, պատվի ու արժանապատվության: Ժողովրդի նվիրյալ գավակները հանուն հայրենիքի ու ժողովրդի գիտակցաբար դուրս էին գալիս հզոր թշնամու դեմ անհավասար պայքարի:

Արևմտյան Հայաստանի հայաշատ ու տարածական մեծ ընդգրկում, տնտեսական ու մշակութային բարձր ներգրավվածություն ունեցող Կարինի նահանգն անմասն չէր այդ գործընթացներից: Այստեղ ևս սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների աննախադեպ վատթարացումը քայքայիչ դե-

րակատարություն ունեցավ նահանգի հայության վիճակի վրա: Մկսված ազտագրական խմորումները, որոնք սկզբում դրսևորվեցին Սահմանադրական շարժման տեսքով, հետագայում վերաճեցին զինված՝ հայդուկային¹ կամ ֆիդայական² պայքարի: Այսինքն՝ ազգային-ազատագրական պայքարը մտավ գործնական փուլ: Տարերայնորեն սկսված այդ պայքարն ուղղված էր իշխանությունների և նրանց թողտվության պայմաններում թալանի, կողոպուտի ու ավազակային կենսակերպ վա-

¹ Հայդուկը առավելապես Բալկաններում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում պարտիզանական պայքար մղող ազատամարտիկների տարածված անվանումն էր, որոնց խմբի ղեկավարը կոչվում էր հայդուկապետ: Հայդուկը հունգարերեն բառ է, որը թարգմանաբար նշանակում է պարտիզան: Երբեմն՝ մենակ, երբեմն՝ խմբով, հայդուկներն ապաստանում էին լեռներում և անսպասելի հարձակվում կառավարական գործքերի, քուրդ հրոսակախմբերի կամ հարկահանների վրա: Հայդուկային խմբերն առաջնորդվում էին չգրված, սակայն սրբորեն պահպանվող օրենքներով, այնտեղ տիրում էր երկաթյա կարգապահություն: Բուլղարիայում, Հարավսլավիայում, Հունգարիայում նրանց անվանում էին հայդուկներ, չեթներ կամ հետևակային զինվորներ, իսկ Հունաստանում թուրքերի դեմ մաքառող վրիժառուների կոչում էին կլեֆտ: Հայ իրականության մեջ հայդուկին գուցահեռ գործածվել են նաև կաչաղ, դաչախ, ֆիդայի, Փոքր Հայքում՝ հրոսակ, չեթե, ասպատակ անվանումները:

² Ֆիդայի կամ ֆեդայի արաբերեն բառ է և նշանակում է անձնագոհ, հանուն գաղափարի նահատակվող մարդ կամ փրկիչ: Ֆիդայական շարժումներ տարբեր ժամանակներում եղել են արաբական մի շարք երկրներում՝ Եգիպտոսում, Պաղեստինում, Իրաքում, ինչպես նաև Իրանում: XIX դարի վերջին քառորդին և XX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում թուրքական բռնատիրության և թուրք-քրդական հարստահարողների դեմ պայքարող հայ ժողովրդական մարտիկների ժողովուրդը տվեց «Ֆիդայի» հավաքական անունը:

րող քրդերի ու մյուս քոչվոր ցեղերի դեմ: Արձագանքը ինքնաբերաբար էր և իշխանության տընտեսական, քաղաքական, իրավական ու հոգեբանական բռնաճնշումներին միանգամայն համապատասխան:

Հաճախ դիպվածի կամ անարդար իրադարձության հետևանքով առաջացած այդ պոռթկումների մասնակիցներն հետագայում համախմբվում էին, քննարկում ու ծրագրում իրենց անելիքները: Արդյունքում միմյանցից առանձին-առանձին գործող խմբերն սկսեցին համագործակցել, իսկ կուսակցությունների ասպարեզ իջնելուց հետո՝ նաև կենտրոններից ղեկավարվել: Հետագայում իրադարձությունների ոչ նպաստավոր զարգացումների արդյունքում այն աստիճանաբար մարեց: Ժամանակի ընթացքում Ժողովրդական բնույթ ստացող այդ պայքարն իր սուր ծայրով ուղղված էր քուրդ ռազմական ավազանու և թուրք ղեկավարության դեմ: Վրիժառու հայդուկի զենքն անհրաժեշտության դեպքում պատժում էր նաև հայ մատնիչներին:

* * *

XIX դարի վերջին քառորդին Կարսի մարզին կից և Ռուսական սահմանին մոտ գտնվող Կարինի նահանգում, որտեղ հայության վիճակը շատ ծանր էր³, ազատասիրական գաղափարներն ավելի հեշտ էին ներթափանցում: Այդ պատճառով էլ Ֆիդայական պայքարն ավելի շուտ ու ավելի բուռն ծավալվեց, քան Արևմտյան Հայաստանի մյուս վայրերում:

Երկրամասի առաջադեմ մտավորականների ակտիվ գործունեությունն ու քարոզչությունը մեծապես նպաստեցին Կարնո աշխարհի հայության ազատասիրական դրսևորումներին, որոնց նախակարապետները եղան նաև տեղացի ֆիդայիները: Պատմությունն իր տրամաբանությունն ունի. հռչակով պատվի է արժանանում ու անմահանում է նա, ով առաջինն է դալիս ասպարեզ՝ հիմք դնելով որևէ

շարժման, լինի դա գաղափարի, թե գործնական գործողությունների տեսքով: Նման հռչակ ձեռք բերեցին ու պատմության մեջ անմահացան Կարսի հնոցով անցած քաջերը, ովքեր հիմնականում գնում էին գործելու Բարձր Հայքում⁴: Համամիտ ենք Ռ. Հովհաննիսյանի, Է. Կոստանդյանի և այլ հեղինակների այն տեսակետին [1,2], որ Բարձր Հայքի հայության ազատասիրական գաղափարների արթնացման վրա մեծ հետք են թողել «Պաշտպան Հայրենեաց», «ՌԻսուլնասիրաց», «Հողային», «Ընթերցասիրաց» կազմակերպությունները և, հատկապես, դրանցից առաջինը: Բարձր Հայքում, չնայած իր կարճատև գոյությանը, ազատասիրական գաղափարների տարածման և ազգային զարթոնքի գործում կարևոր դերակատարություն ունեցավ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը⁶, որի ցանած սերմերը շուտով ծլարձակեցին և ազատության «Ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն» [2]: Հենց Էրզրումից հնչած այդ ձայնն էլ առաջ բերեց մի յուրահատուկ շրթայական ռեակցիա և շարժումը տարածվեց նաև մյուս գավառներում:

Բարձր Հայքում, որտեղ հայդուկային շարժումն ավելի վաղ սկիզբ առավ, քան ի հայտ կգային ազգային կուսակցությունները, գործող հայդուկները աստիճանաբար խմբեր կազմեցին և սկսեցին պայքարել թշնամու դեմ: Այստեղ աչքի ընկնող հայդուկներից էին Մեպուհը (Բաբերդցի), Տուրքախը (Հարություն Այվազյան կամ Կիրակոսյան), Կայծակ Առաքելը (Աբաջյան, բաբերդցի Աղա), Անտոն Գոշը, Հովհաննես Կորկոտյանը, Վահան Շահինյանը, Նիկոլը, Մելքոնը, Գերասիմը և շատ ուրիշներ, որոնք դարձան Կարինի հայության կուռքերը:

Կարնո աշխարհի առաջին հայդուկներից մեկը Հարություն աղա Տեր Մարտիրոսյանն էր (Հունո, Յունո)⁵: Ժամանակակիցների վկայությամբ Հունոն «կիսագրագետ, յաղթ, առոյգ

³ Գնալով թափ հավաքող այդ պայքարին մասնակցում կամ սատարում էր ժողովրդի մեծ մասը, ինչի արդյունքում այն միտում ուներ և աստիճանաբար վերածվում էր շարժման, սակայն իրադարձությունների ոչ նպաստավոր զարգացումների արդյունքում՝ չդառնալով դասական չափանիշներին ամբողջությամբ համապատասխանող շարժում, այն աստիճանաբար մարեց: Այս հանգամանքը նկատի ունենալով զուգահեռ օգտագործվում են «պայքար» և «շարժում» հասկացությունները, որոնք հավասարազոր չլինելով հանդերձ, այս դեպքում գրեթե նույնանում են:

⁴ Ֆիդայիներին բնաստեղծություններ են ձուներ Դանիել Վարուժանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Բասակյանը և ուրիշ մեծեր, իսկ Խաչիկ Դաշտենցը «Ռանչպարների կանչը» վեպում կերտել է հայտնի ֆիդայիների կերպարներ: Ֆիդայիների կերպարներին անդրադարձել են նաև նկարիչներն ու քանդակագործները:

⁵ Ծավել է Վանից ոչ հեռու գտնվող գյուղերից մեկում: Հունոն որոշ ժամանակ հարել է հնչակյան կուսակցությանը, իսկ ավելի ուշ դարձել դաշնակցական:

տղամարդ մը, որ ասպատակային խումբ մըն էր վարեր... Տիպար հայդուկ մըն էր, որ կը գործեր լուռ ու մունջ, լի ահարկու վրեժխնդրութեամբ թուրքերու եւ մանաւանդ քիւրտերու հանդէպ» [3]: Նա շատ հանդուգն էր և կռվարար, ինչի մասին փաստում էր նաև հայրը. «Վերջին աստիճան կտրիճ էր: Սուրբ բերանը խոթէին չէր վախնար» [4]: Մի օր, երբ գյուղ եկած թուրք հարկահաններն և ժանդարմներն իրենց սանձարձակ արարքներով անարգում ու խոշտանգում էին խեղճ ու անգրագետ գյուղացիներին, Հունոն նրանց հետ կռվի է բռնվում, ջարդում է մեկի գլուխը և փախչում Ալաշկերտ: Այս դիպվածից հետո էլ սկսվում է նրա հայդուկային գործունեությունը:

1880-ական թվականների կեսերից իր շուրջը համախմբելով մի քանի բախտակից քաջ ու «ղաչաղ» դարձածների՝ Հունոն ստեղծում է իր խումբը և ասպատակային գործունեություն ծավալում Ալաշկերտ-Կադզվան ճանապարհների վրա: Այստեղ էր գործում նաև քուրդ ղաչաղ Համզոն: Հունոն մտերմանում է նրա հետ և նրանց խմբերը միավորվում են: Այստեղ էր նաև Ավետիսը՝ Ավոն: Սկզբում նրանք հնարավորության դեպքում առանց խտրականության թալանում էին հայերին, քրդերին ու թուրքերին: Մի անգամ էլ խումբը կռվի է բռնվում իրեն հետապնդող կառավարական զորքերի հետ: Այստեղ շատերը զոհվում են, իսկ հրաջքով կենդանի մնացած Հունոն փախչում Կովկաս:

Որոշ ժամանակ Կովկասում դեգերելուց հետո Հունոն վերադառնում է և շարունակում արդեն գիտակցված պայքարը անօրեն թալանչիների դեմ՝ հարուցելով շրջապատի հիմնականում ավագակությամբ զբաղված քրդերի զայրույթը: Վերջիններս ամենուր հետևում էին Հունոյին և փորձում հաշվեհարդար տեսնել նրա հետ: Ի վերջո Մատուռի կամ Մատուռբեդի մոտ քրդերին հաջողվում է շրջապատել Հունոյի խմբին: Հարյուրավոր քրդերի կողմից պաշարման մեջ ընկած Հունոն կարողանում է քաջաբար կռվել և ապահովել իր խմբի հաջողությունն ու, ճեղքելով պաշարման օղակը, հասնում է Կադզվան: Այնուհետև միառժամանակ առանձնանում է Ախուրյանի ափին գտնվող Ղազարապատ գյուղում:

Այդ ընթացքում Հունոյի երեք ընկերները՝ Արամայիս Ազնավուրյանը, Էրզրումցի և Ղա-

րաբաղցի Արշակները, միացել էին «արշավանքի» նախապատրաստվող Սարգիս Կուկունյանի խմբին: Շուտով Հունոն տեղեկանում է, որ Կուկունյանը չարակամորեն սպանել է տալիս հայ ազատամարտի մեծ զավակ Հակոբ Սարկավազին¹¹ և իրեն էլ է փնտրում, որ սպանել տա: Ենթադրում ենք, որ դրա պատճառն այն էր, որ ժողովուրդը սիրում և ընդունում էր Հունոյին, իսկ Կուկունյանին՝ ոչ: Դրա համար էլ Կուկունյանը նախանձով էր նայում Հունոյի հեղինակությանը, հայդուկապետի անունին և Հակոբ Սարկավազի պես ցանկանում էր նրան էլ ոչնչացնել: Փորձված Հունոն չէր սխալվում. «շուտով Ղազարապատ են գալիս Դադեթեցի ղաչաղ Աբրահամը եւ նմանապես ղաչաղ եւ Կուկունեանի աջ թեւը հանդիսացող Սարդարը, ճիշդ ու ճիշդ նրանք, որ գնդակահարել կամ սրախողխող էին արել Սարկավազին երկու-երեք շաբաթ առաջ: ... Փորձ են անում զարնելու, բայց Յունոն, ինքն էլ աւագակ եղած ու հին աղուէս, ճարպիկ կերպով ձախողեցնում է իր կեանքին դեմ նիւթուած դաւադրութիւնը եւ քաջաբար փախուստի է մատնում եկուորներին» [5]:

Կուկունյանի արշավանքը ձախողվում է: Խմբի մի մասը սպանվում կամ ձերբակալվում է ռուս սահմանապահների կողմից, մյուսներին հաջողվում է փախչել ու ազատվել. դրաց մեջ էին նաև Արամայիս Ազնավուրյանը և երկու Արշակները: 1890 թ. ուշ աշնանը Հունոն մեկնում է Երևան, որտեղ հանդիպումներ է ունենում հնչակյան գործիչ Ռուբեն Խանազատի հետ: Այնուհետև անցնում է Թավրիզ, որտեղից էլ Նախավկայի վանք: Այստեղ Արամայիս Ազնավուրյանի վկայությունների հիման վրա կարծիք է ստեղծվել, թե Հունոն իբրև թե դավաճանության և իրեն ու այլ հայդուկների լրտեսելու պատճառներով սպանում է վանքի հոգևորական Արսեն վարդապետ Թոխմախյանին [5]⁶: Արամայիս Ազնավուրյանը գրում է, որ վարդապետը մի անգամ բանտարկվում է իշխանությունների կողմից և ազատ արձակվելու դիմաց, որպես փրկագին, նրանից պահանջում են լրտեսել հայդուկներին, մասնավորապես՝ Հունոյին: Եվ երբ Հունոն հասնում է Նախավկայի վանք, նրան փնտրելով այստեղ է հասնում նաև վարդապետ

⁶ Ի դեպ Հունոյին է նվիրված Պերճ Պոռչյանի «Հունո» վեպը:

տը: Հունոն արդեն գիտեր նրա այցի նպատակը և երբ այդ մասին հարցնում է ու ասում, որ իրեն լրտեսելու համար ես եկել, վարդապետը արդարացման ոչ մի խոսք չի գտնում ասելու: ՀՅԴ-ի հանձնարարությամբ Հունոն սպանում է «դավաճան ու լրտես» Արսեն Թոխմախյան վարդապետին [6]⁷:

Այնուհետև Հունոն գալիս է Վաղարշապատ, որտեղ Մայր Աթոռում կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կողմից նշանակվում է գինետան կառավարիչ: Սակայն բնավորությամբ բռնկվող և իրասածի Հունոն մի անգամ վիճում է վեհափառի հետ, որից հետո հեռանում է Մարդարապատ: Այստեղ Հունոն, պատահաբար վայր ընկնելով, վիրավորվում է, ապա Արամայիս Ազնավուրյանի օգնությամբ տեղափոխվում է Վաղարշապատ և բուժվում: Սակայն ձեռք է բերում նոր, անբուժելի հիվանդություն՝ թոքախտ, որն էլ շուտով նրա մահվան պատճառ է դառնում. «...Հիւանդանում է թոքատապով ու նորէն անկողին ընկնում ու այլեւս վեր չի կենում: Նրա կեանքը փրկելու բոլոր ջանքերը, որ թափուում են Արամայիսի, Քեռու, բժիշկների ու տեղական ընկերների կողմից, ի գուր են անցնում. եւ Յունօն մեռնում է 1892 թուին, Մայիս կամ Յունիս» [6]: Մահանում է գլուխը Արամայիս Ազնավուրյանի ծնկներին դրած: Կյանքից հեռանում է իր սխալներով ու երբեմն ոչ ճիշտ պահվածքով, սակայն նաև իր գործին, հայրենիքին ու նրա ազատագրությանը անմնացորդ նվիրված հայդուկապետը, թուրք-քրդերի սարսափը հանդիսացող, սերունդների հիշողության մեջ իր հակասական բնութագրումներով առանձնացող Հունոն՝ Հարություն Աղան: Նա մեծ ավանդ ուներ հատկապես Արևմտյան Հայաստան գենք-զինամթերք փոխադրելու գործում:

⁷ Նշենք, որ Հունոյի ու Արսեն Թոխմախյանի վարքագծի մասին կան հակասական կարծիքներ: Այդ իրարամերժ տեսակետների պարզաբանումը սույո հոդվածի նպատակներից դուրս է: Միայն նշենք, որ այլ աղբյուրներ վկայում են, որ Արսեն Թոխմախյանը խելացի, բանիմաց, ազնիվ ու հայրենասեր անձնավորություն էր և նրա մասին ավելի հաճախ նենգ թշնամու ակտիվ ու անտեսանելի ձեռքով հաճախ տարածվել են կեղծ լուրեր ու ներկայացվել հանիրավի մեղադրանքներ, որպիսի իրավիճակներ էլի են եղել, ինչպես օրինակ՝ Արփիար Արփիարյանի դեպքում: Վարդիվառյան Շ., Մեծ երազի ճամբուն ունեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան, հատոր Ա, Նիւ Ճըրզի, 2015, էջ 215-216:

Կարնո աշխարհի հայդուկային պայքարի մեջ կարևոր դերակատարություն է ունեցել ճանաչված հայդուկ Քեռին (Արշակ Գավաֆյան, Քյաֆթառ)⁸: 1890 թ. Քեռին մասնակցում է նաև Կուկունյանի արշավանքին, իսկ 1895 թ. ծանր օրերին Անդրանիկի հետ էր. «իբ իսկ վկայութեամբ՝ ըլլալով անոր լաւագոյն գործակիցներէն մէկը» [3]: Այնուհետև մասնակցում է Մասունի ինքնապաշտպանական մարտերին, ապա անցնելով Կովկաս՝ մասնակցում հայ-թաթարական կռիվներին: Քեռին վերածնվող հայ ժողովրդի ապագայի նկատմամբ լավատեսության և հերոսական ոգու լավագույն մարմնացումներից մեկն էր:

1890 թ. Կարինում և շրջակայքում տեղի ունեցած ըմբոստության դեպքերը վկայում էին, որ Բարձր Հայքում ծավալվել էր հայդուկային-ազատագրական պայքար և այդ գաղափարներով էր արդեն առաջնորդվում Կարինի ողջ երիտասարդությունը. «...Եթէ այնպէս պատահի, որ ջաջողինք գտնել դրամը,-կարդում ենք փաստահարուստ աշխատության մեջ,- կը կապենք թիւրքը եւ սպաննելու սպառնալիքով կատանանք մեր փափաքած գումարը: Ստանալէ վերջ, կսպաննենք ու երկու լաւ գործ մեկէն կատարած կըլլանք թիւրք մը պակասեցնելով և անոր դրամը հայրենիքի ազատու-

⁸ Քեռին ծնվել է Կարինում խանութպանի ընտանիքում: Վաղ տարիքից Արշակը ծանոթ էր թուրքերի բարքերին, ակնատես է լինում հայերի հանդեպ անմարդկային քայլերին և խոշտանգումներին: Այդ ամենը խոցում են նրա մանուկ հոգին ու էությունը լցնում անհուն վրեժով դեպի թուրքերը: Նա իր խմբով մեծ մասամբ գործում էր Բասենի և Էրզրումի շրջաններում: Այս խմբում է ձևավորվում Արշակի հեղափոխական կերպարը՝ ապագայի «Քեռին»: Հունոն եղավ Արշակի հեղափոխական դաստիարակը, իսկ Արշակը՝ Հունոյի արժանի հաջորդը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ ռուսները թուրքերին են վերադարձնում Կարինը, այստեղ ավելի են սաստկանում բռնությունները հայերի հանդեպ: Այդ ամենն այլևս անհանդուրժելի է դառնում Արշակի համար, որը թողնում է տուն ու տեղ և թուրքերից վրեժ լուծելու նպատակով, դառնում հայդուկ: Մինչև 1887 թ. նա ինքնուրույն է գործում, իսկ դրանից հետո մտնում է Հունոյի խմբի մեջ ու մինչև 1890 թ. հայդուկային կռիվներ վարում Ալաշկերտ-Կաղզվանում: Նրանց խումբը դարձել էր այս շրջանների թուրք և քուրդ զանգվածների սարսափը: Քեռու մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ Մարգարյան Ա., Քաջարի հայդուկ Քեռին(Արշակ Գաֆաֆյան), Հայաստան ցեղասպանությունից վերածնունդ 1915-2015 (Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների յոթերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու), Ե., 2015, էջ 335-371:

թեան ծառայեցնելով» [7]: Տարբեր վայրերում արդեն գործում էին հայդուկային մի քանի ըմբոստ խմբեր:

Կարնո աշխարհի ազատագրական գործիչներից էին նաև Արմեն Գարոն (Գարեգին Փարստրմաճյան), Վարդգեսը (Հովհաննես Մերենկյուլյան, Զարմայր)՝ Կարնո և ողջ հայության սիրելի Գիսակը, Գարեգին Կարնեցին (Գարեգին Ղոռյան), Միքայելը (Քյոսա), Բաբերոցի Գևորգը, Կարնեցի Եղիշը, Բալաջանը (Ստեփան Ստեփանյան), Հովհաննես Կոկոտյանը, Մեպուհը, Կայծակ Առաքելը (Բաբերոցի վարազ), Վանի Սարգիսը⁹ և ուրիշ շատ-շատերը, որոնց մի մասի անունները նույնիսկ անհայտ մնացին հետագա սերունդներին:

Կարինում հայդուկային պայքարի արժանավոր ներկայացուցիչներից էր Արամ Արամյանը (Աշոտ, Թաթուլ), որը գործել է հոչակավոր Տիգրան Օրոնյանի (Շամիլի) հետ [8]: «Երկուսն էլ միեւնոյն խմորիցն էին՝ խիզախ, յանդուգն, նուիրուած ու մոլեռանդ յեղափոխականներ, հմուտ կազմակերպիչներ» [3]: Նրանց զինակիցներին անվանում էին «համարձակներ»: Նալբանդյանի, Բաֆֆու և Գամառ Քաթիպայի բոցաշունչ ստեղծագործություններից խանդավառված պատանի էր Արամ Արամյանը, որը դեռ վարժարանում ուսանելու տարիներին արդեն դրսևորում էր խիզախ ու անմնացորդ հայրենասերին հատուկ հատկություններ: Հայրենիքի փրկության գործի նվիրյալը զինված պայքարը համարում էր հայ ազգի փրկության միակ ճիշտ ուղին: Ոչ մի դժվարության առջև չընկրկելով՝ Արամյանը Էրզրումի երիտասարդության մեջ ներարկում ու արմատավորում էր ազատության ձգտումներն ու հայրենիքին ու նրա արդար դատին անմնացորդ նվիրվելու գաղափարները: Նրա մեծագույն ներդրումն ազգային ազատագրական պայքարում եղավ այն, որ կարողացավ կապ հաստատել Կարնո աշխարհի տարբեր շրջաններում գործող հայդուկային-ասպատակային խմբերի միջև, համախմբել նրանց¹⁰:

⁹ Նույն ինքը Սարգիս Բարսեղյանը, ով իր հմայքով, համոզիչ խոսքերով ու կատարած գործերով գրավեց ժողովրդական զանգվածներին, ում Կարնո հայությունն միանգամից ընդունեց և շատ սիրեց:

¹⁰ Հայ ժողովրդի ազատագրության ուղիների մասին Արամ Արամյանի մոտեցումները շատ ընդհանրություններ ունեն հարմարական կուսակցության տեսաբանների

Նա բոլոր խմբերին կոչ էր անում միմյանց հետ նախապես պայմանավորվել և գործել միասին, որի դեպքում, բնականաբար, արդյունավետությունն անհամեմատ բարձր կլիներ: Արամյանն իր հերոսական գործունեությունը շարունակում է մինչև 1896 թ., երբ մատնությունով ձերբակալվում է և 1899 թ. մահապատժի ենթարկվում Էրզրումում: Քաջասիրտ հայդուկը անգամ կախաղանի տակ չի խոնարհվում. «Կախաղանի այդ բարձունքէն, Արամ Արամյանի ոգին ու գաղափարները, ալիք ալիք կը տարածուին ոչ միայն Էրզրումի, այլ ամբողջ հայկական նահանգներու տարածքին վրայ, հպարտանք ու ոգի ներշնչելով ապրող ու գալոց հայ սերունդներուն»:

Կարինի նահանգում հայդուկային պայքարի սկզբնական փուլի կարևոր դերակատարներից էր «Ախալցխայից առաջիններից երգիր անցած երիտասարդ ախալցխացի Տիգրան Օրոնյանի»¹¹ կամ Շամիլի [9] խումբը, որը 1888-1889 թթ. գործում էր Օլթիի շրջակայքում և սարսափ էր տարածել բոլոր հարստահարողների վրա: Նա առաջինն էր, որ թուրքերից ու քրդերից վրեժ լուծելու համար զինված խումբ մտցրեց Արևմտյան Հայաստան: 1892 թ. Ախալցխացի Տիգրանի խմբի կազմում էին ալեքսանդրապոլցիներ Ուսուլ Գրիգորը, Քոռ Եղոն, Ալեքսանդրապոլից քիչ հեռու գտնվող Ղոնաղոան գյուղից Մարտիկը և էլի շատ ուրիշներ: Օլթիում խմբին է միանում հայտնի դաչաղ Կոլիկի Տղա անունով մի երիտասարդ, որից ողջ շրջանի թուրքերը սարսափում էին: Տիգրանը վաշխառուներին և հարուստներին թալանում և ավարը բաժանում էր չքավորներին: Նրա խմբի անդամներից էր նաև Ախալցխացի Վարդանը, որն ավելի ուշ դարձավ Արաբոյի խմբի քաջերից մեկը: Իշխանությունները, տեղեկանալով խմբի գործունեության մասին, սկսում են ակնդետ հետևել նրանց

և Դժողը Հրայրի՝ համատեղ, ընդհանուր և հարմար պահին թշնամուն վճռական հարված հասցնելու տեսակետների հետ: Այն տարբերությամբ, որ Արամ Արամյանի այդ տեսակետները դեռևս հում էին և կարոտ հղկումների:

¹¹ Նրան նաև Շամիլ էին անվանում, Էրզրումից Ախալցխա գաղթած կարնեցի էր, հանդուգն ու անվեհեր հայդուկ: Նրա խումբը գործում էր երկայնա կարգապահությամբ: Աշխույժ ու կենսուրախ երիտասարդ էր, աչքի էր ընկնում ընկերասիրությամբ: Տարված էր Բաֆֆու հերոսներով և «ավագակ հայդուկների» խիզախ գործերի մասին լուրերով:

տեղաշարժերին: Հետապնդումներից ազատվելու համար Տիգրանը փորձում է անցնել սահմանը, սակայն դա նրան չի հաջողվում: Դրանից հետո խումբը ցրում է, զենքերը պահ տալիս գյուղերից մեկում և ինքն անցնում է Էրզրում: Այստեղ սրվում են նրա և Խաչատուր Կերեկցյանի¹² հարաբերությունները, որը ողբերգական ավարտ է ունենում: Արամ Արամյանի թաթուլի միջոցով Տիգրան Օքոնյանը սպանել է տալիս Կերեկցյանին: Ավելի ուշ Կերեկցյանի եղբայր Տիգրանը, մահամերձ եղբորից իմանալով եղելությունը, վրեժ է լուծում և ինքն էլ սպանում է Օքոնյանին [10]:

Ընդհանուր առմամբ կարնեցի հայդուկներին բնորոշ էին մինչև կյանքի վերջը երդմանը հավատարիմ մնալը, անհազ ազատասիրությունն ու հայրենիքն ազատ ու բարգավաճ տեսնելու համար պայքարի գաղափարները: Այդ շրջանում հայդուկային պայքարի աննկուն գործիչներից էին նաև Գարեգին Կարնեցին և Միքայելը՝ երկու անբաժան ընկերներ¹³, Հովհաննես Կորկոտյանը¹⁴, Վահան Շահինյանը, Սեպուհը, Կայծակ Առաքելը և ուրիշներ: Ալաշկերտում երկար տարիներ ժողովրդի պաշտպանության պատվաբեր գործը կատարել է Արամայիս Ազնավուրյանի հայդուկային խումբը, որի մասին, ցավոք, մեզ քիչ բան է հայտնի: Բացառություն են, թերևս նրա հուշերի որոշ պատառիկներ, որոնք տարբեր տարիներին տպագրվել են «Հայրենիք» ամսագրում: Այդ հրապարակումներից տեղեկանում ենք, որ նրա զինակից ընկերներն են եղել Հարություն Ադան և երկու Արշակները, որոնց հետ նա անցկացրել է իր հայդուկային ողջ կյանքը:

¹² Հայտնի «Պաշտպան հայրենյացի» առաջնորդի մասին է խոսքը:

¹³ Գարեգին Ղոյանը և Քյուսեն՝ Միքայելը երկու ըմբոստ հայդուկներ էին սիրված ժողովրդի կողմից, նրանց կողքին էին հայդուկներ բաբերոցի Գևորգը և Էրզրումցի Եղիշը՝ «Սև օձ» անունով: 1914 թ. միացել են Քեռու խմբին և զոհվել քուրդ ավազակների դեմ մղած հերական կռիվներից մեկում: Իսկ թե կոնկրետ որ և ինչ պայմաններում, ցավոք, մեզ տեղեկություն գտնել չհաջողվեց:

¹⁴ Էրզրումցի էր, որի ընտանիքը ապրում էր Ախալցխայում: Դեռ փոքր տարիքում գալով Թիֆլիս՝ ծանոթանում և առնչվում է հեղափոխական՝ (այդ բառով էր այդ տասնամյակներում «որակվել») Արևմտյան Հայաստանի և հայության փրկության գոյամարտը-Կ. Ա.) գաղափարներին և որոշում է «Վրեժ» խմբի հետ անցնել Երկիր: Ապա 1895 թ. վերադառնում է Կարին ու մասնակցում դիմադրական կռիվներին: Այստեղ էլ Հովհաննեսը ընկնում է հերոսի մահով:

Խումբը մեծ ներդրում է ունեցել հատկապես Բասենի շրջանում 1895-1896 թթ. հայերի նկատմամբ թուրք-քրդական հարձակումների ու գազանությունների դեմն առնելու գործում: Հարություն Ադան մասնակցել նաև է Խանասորի հայտնի արշավանքին, որտեղ եղել է հարյուրապետ շատախցի Փոխիկի օգնականը: Զբաղվել է Ազնավուրյանի խմբի կողմից Երևան-Փարաքար-Բայազետ-Շահրիար-Կողբ գծով դեպի Երկիր զենքի ու զինամթերքի փոխադրության դժվարագույն առաքելությամբ:

Տարիներ շարունակ Քյուսեի Քյոյում է պայքարել Գրիգոր Տեր-Մկրտչյանի հայդուկային ուժեղ խումբը, որի անդամներից էին նորբայազետցի Արտաշես Բարիկյանը (Եգոր), սալմաստեցի Ավետիսը, տիվրիկցի Վարդան Տեր-Ղավթյանը (Բիձա), ալեքսանդրապոլցի Գրիգոր Լոռեցյանը (Պիղատոս), Մշո Վարդենիս գյուղից Օհան Լարոյանը (Լորթոն), թիֆլիսեցի Ռուբեն Տեր-Կարապետյանը, վանեցիներ Խաչիկ Աբրահամյանը, Գասպարը, Գրիգոր Ասլանյանը, շատախցի Ազր Քյոսեյանը, ախալքալաքցի Ստեփան Նազարեթյանը (Իվան), ախալցխացի Մարգիս Յաղանյանը, դազախցի Մկրտիչ Հակոբյանը, շուշեցի Արշակ Ոսկանյանը, համադանցի Մաղաթել Զոհրաբյանը, Խաչիկ Խիզանցին, դալարցիներ Մկրտիչ Սուրբանյանը (Մկո), Փանոսը, Աբգարը, Մարտիրոսը, Մարիամ Մակարյանը (Մարո), Աստվածատուր Միրզայանը և ուրիշներ, որոնք իրենց անձը նվիրաբերել են հայրենիքի ազատագրության սուրբ գործին: Նշենք նաև, որ հայդուկային խմբերի կարևոր առաքելություններից էր երկրի խորքերը զենք-զինամթերք տեղափոխելը: Այդ կարևոր գործողությունների ընթացքում տեղի էին ունենում բախումներ քրդերի և ոստիկանական ուժերի հետ, որոնց ընթացքում հաճախ զոհվում էին մեծ թվով հայդուկների: Այսինքն՝ այդ գործընթացն այնքան էլ արդյունավետ չէր և պատճառ էր դառնում մեծաթիվ զոհերի:

Առաջ անցնելով նշենք, որ Կարին աշխարհում հայդուկային պայքարը վայրիվերումներով շարունակվեց մինչև 1908 թ. օսմանյան հեղաշրջումը, որից հետո աստիճանաբար անկում ապրեց: Սակայն հետագայում, հատկապես՝ եղեռնի ժամանակ, հին հայդուկներից շատերը կրկին զենքը ձեռքներին դուրս եկան մարտադաշտ խեղճ ու անզեն բնակչությանն ինչ-որ կերպ պաշտպանելու, սակայն, ցավոք,

ուժերը խիստ անհավասար էին: Այդ մասին կխոսենք մեկ այլ առիթով:

Օգտագործված աղբյուրներ և գրականություն

1. Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005:
2. Հովհաննիսյան Ռ. իր «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց կազմակերպությունը», Ե., 1965:
3. Չարբզ Դ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէրոյթ, 1957, էջ 508, Յունոյի մասին տես նաև Յուշեր Արմենակ Եկարյանի, Պէրոյթ 1985, էջ 32:
4. Հայրենիք, Բոստոն, 1938, թիվ 5, Յարութին Տէր Մարտիրոսեան (Յունօ), Ս. Թորգոմեան, էջ 112:
5. Հայրենիք, Բոստոն, 1958, թիվ 5, Հրոսակապետ Յունօն, էջ 45:
6. Հայրենիք, Բոստոն, 1937, թիվ 8, հունիս, Արամայիս Ազնավուրեանի յուշերը,
7. Նշկեան Մ., Առաջին կայծերը. էջ մը Կարնոյ զարթօնքէն, Ա.Տ., տպ. Պայքար, 1930, էջ 44:
8. Հայրենիք ամսագիր, 1960, թիվ 6, հունիս:
9. Մէլքոնյան Ա., Ջավախքը և հայ ազգային-ազատագրական շարժումները, տես <http://Javakhk.livejournal.com/16342.htm/>:
10. Հայրենիք, 1937, թիվ 9, հուլիս, Արամայիս Ազնավուրյանի յուշերը, էջ 146:

Հայ իրականությունը և Մկրտիչ Փորթուգալյանի նամականին

Մարգարյան Ս. Թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/

E-mail: sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ Մկրտիչ Փորթուգալյան, նամականի, «Արմենիա» պարբերական, ազատագրական շարժում

The Armenian Reality and M. Portugalyan's Correspondence

Sargsyan S.T.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)

E-mail: sargsyansuren@yandex.ru

Abstract: In the last quarter of the 19th century Mkrtych Portugalyan, an outstanding social and political figure, permanent editor of the newspaper "Armenia", concerned about the fate of the Western Armenians, played a great role in the revival of national consciousness, the spread of liberation ideology and the idea of unity among Armenians. The newspaper "Armenia", published by M. Portugalyan, acting as a protector of the Armenian ethnic gene, was a real chronicle - a mirror of its time.

